Հավելված
ՀՀ կառավարության 2013 թվականի
մարտի 28-ի N 335 - Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՕՊՏԻՄԱԼԱՑՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

Սույն ծրագիրը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության արխիվային գործի բարեփոխումների իրականացման, այդ թվում՝ արխիվային ծառայությունների մատուցման էլեկտրոնային համակարգի ներդրման բաղկացուցիչ մասը:

2002 թվականին Հայաստանի Հանրապետության կենտրոնական պետական արխիվների միաձուլման միջոցով ստեղծվեց «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ ազգային արխիվ), Երևան քաղաքի և մարզային պետական արխիվների հիման վրա ստեղծվեցին ազգային արխիվի մասնաճյուղեր, իսկ մարզային պետարխիվների մասնաճյուղերի (նախկին շրջանային պետարխիվներ) հիման վրա՝ ազգային արխիվի ներկայացուցչություններ: Արդյունքում ստեղծվեց ազգային արխիվի 41 տարածքային ստորաբաժանում: Հետագա տարիներին գործառույթների նվազման պատճառով դադարեցվեց 3 ներկայացուցչության գործունեությունը և ստեղծվեց 1 ներկայացուցչություն:

Հայաստանի ազգային արխիվի տարածքային ստորաբաժանումների գործառույթները բաժանվում են 2 խմբի: Առաջինը՝ Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի՝ տվյալ տարածաշրջանում ստեղծված փաստաթղթերի համալրումը, հաշվառումը և պահպանումն է, երկրորդը՝ այդ փաստաթղթերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ նրանց վերապահված լիազորությունների իրականացման համար տեղեկությունների տրամադրում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ու օտարերկրյա քաղաքացիներին և իրավաբանական անձանց արխիվային ծառայությունների մատուցում՝ սոցիալ-իրավական բնույթի արխիվային տեղեկանքների տրամադրմամբ:

2. Տարածքային ստորաբաժանումների ներկա վիճակը

Ազգային արխիվի 11 տարածքային ստորաբաժանումներից 9-ը տեղաբաշխված են պետության, 2-ը համայնքի, 28 ներկայացուցչություններից 5-ը՝ պետության, 19-ը՝ համայնքի, 4-ը՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականություն համարվող շենքերում: Համայնքային տարածքները տրամադրված են անհատույց օգտագործման իրավունքով:

2003-2012 թվականների ընթացքում ազգային արխիվի միջոցներով հիմնանորոգման են ենթարկվել Սյունիքի, Վայոց ձորի, Արարատի, Շիրակի, Արմավիրի, Գեղարքունիքի, Արագածոտնի մարզային մասնաճյուղերի, Գորիսի, Արմավիրի, Արթիկի, Արարատի, Թումանյանի, Նոյեմբերյանի, Բերդի, Չարենցավանի, Աբովյանի, Թալինի, Ապարանի, Ծաղկահովտի տարածքային ներկայացուցչությունների տարածքները: 2013-2015 թթ. նախատեսված է հիմնանորոգման ենթարկել Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզային մասնաճյուղերի տարածքները:

2003-2012 թթ. ընթացքում իրականացվել է տարածքային ստորաբաժանումների տեխնիկական վերազինում: Տրամադրվել է համակարգչային տեխնիկա և գրասենյակային կահույք, փայտյա դարակաշարերը փոխարինվել են մետաղյա դարակաշարերով:

3. Տարածքային ստորաբաժանումների կողմից գործառույթների իրականացումը

Հայաստանի Հանրապետությունում 1990-ական թվականներին իրականացված սոցիալ-տնտեսական բարեփոխումների արդյունքում պետական կազմակերպությունների թվաքանակի նվազեցման հետ նվազել է նաև տարածքային ստորաբաժանումների գործառույթներից առաջինը՝ փաստաթղթերի համալրումը: Եթե 2004 թ. տարածքային ստորաբաժանումները համալրել են 54 հազար, ապա 2012 թ.՝ ընդամենը 25,5 հազար գործ:

Երկրորդ գործառույթի՝ արխիվագիտական ծառայությունների մատուցման բնագավառում նկատվում է աճ: Շահառուների քանակը վերջին 5 տարիների ընթացքում ունի հետևյալ պատկերը՝ 2007 թ. – 12435, 2008 թ. -18976, 2009 թ.- 19876, 2010 թ.- 20006, 2011 թ. - 18842, 2012 թ. - 20905, որը 2011 թ. նույն ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 10 տոկոսով:

Սակայն, ըստ մարզերի և տարածաշրջանների, գոյություն ունի շահառուների քանակի հսկայական տարբերություն:

«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի տարածքային

ստորաբաժանումների կողմից ծառայությունների մատուցման ծավալը

NN ը/կ	Ստորաբաժա-նումը	Աշխա-տող-ների քանա-կը	Շենքային պայման-ները (քառ. մ)	Արխիվային գործերի քանակը	2011 թ. շահա-ռու-ների թիվը	2011 թ. շահառու-ների ամսա-կան թիվը	2012 թ. շահա-ռու-ների թիվը	2012 թ. շահառու-ների ամսա-կան թիվը
1	2	3	4	5	6	7	8	9
1.	Արագածոտնի մ/մ	4	108	16600	300	25	342	29
1.1.	Թալինի տ/ն	2	76	10500	447	37	415	35
1.2.	Ապարանի տ/ն	1	40	6000	220	18	224	18
1.3.	Ծաղկահով-տի տ/ն	1	35	3550	174	14	273	23
2.	Արարատի մ/մ	4	1260	33000	960	80	1184	98
2.1.	Արարատի տ/ն	1	86	16500	267	22	401	33
2.2.	Մասիսի տ/ն	2	69	16740	280	23	353	29
3.	Արմավիրի մ/մ	4	130	31750	618	51	732	61
3.1.	Արմավիրի տ/ն	3	91	13450	1030	85	1129	94
4.	Գեղարքունիքի մ/մ	5	100	30670	613	51	740	62
4.1.	Մարտունու տ/ն	2	60	18000	521	43	625	52
4.2.	Ճամբարակի տ/ն	1	80	8740	171	14	170	14
4.3.	Սևանի տ/ն	1	62	11400	232	19	203	17
4.4.	Վարդենիսի տ/ն	1	31	7440	232	19	166	14
5.	Լոռու մ/մ	7	1200	87000	1095	91	1304	108
5.1.	Թումանյանի տ/ն	2	75	10400	301	25	354	29
5.2.	Սպիտակի տ/ն	1	75	5200	250	21	296	25
5.3.	Ստեփանավա-նի տ/ն	1	50	7500	171	14	243	20
5.4.	Տաշիրի տ/ն	1	77	8060	221	18	247	20
6.	Կոտայքի մ/մ	6	475	42000	925	77	1028	86
6.1.	Աբովյանի տ/ն	3	110	17700	1232	102	1221	102
6.2.	Եղվարդի տ/ն	1	59	6300	162	14	199	16
6.3.	Չարենցավանի տ/ն	2	126	8400	571	48	601	50
7.	Շիրակի մ/մ	9	300	113000	1314	110	1470	123
7.1.	Աշոցքի տ/ն	1	45	7000	74	6	64	5

7.2.	Արթիկի տ/ն	2	93	8930	567	47	503	42
7.3.	Մարալիկի տ/ն	2	72	14250	254	21	292	24
8.	Սյունիքի մ/մ	6	250	43115	62	503	561	46
8.1.	Գորիսի տ/ն	2	65	11600	406	34	495	41
8.2.	Սիսիանի տ/ն	1	60	8800	240	20	360	30
8.3.	Մեղրու տ/ն	2	47.6	13550	145	12	153	13
9.	Վայոց ձորի մ/մ	4	81	9700	299	25	326	27
9.1.	Վայքի տ/ն	1	40	3350	50	4	91	7
9.2.	Ջերմուկի տ/ն	1	14	1230	83	7	101	8
10.	Տավուշի մ/մ	3	301	31260	412	34	508	42
10.1.	Բերդի տ/ն	2	59	19850	382	32	366	30
10.2.	Դիլիջանի տ/ն	2	47	8330	253	21	352	29
10.3.	Նոյեմբերյանի տ/ն	2	58	12050	349	29	305	26
11.1.	Երևանի ք/մ	6	560	197000	2518	210	2495	207

Տարածքային ստորաբաժանումներից 3-ը ամսական ունեն մինչև 10 շահառու (Աշոցքի, Վայքի, Ջերմուկի ներկայացուցչություններ), 3-ը՝ մինչև 15 շահառու (Ճամբարակի, Վարդենիսի և Մեղրիի ներկայացուցչություններ), 8-ը՝ մինչև 25 շահառու (Ապարանի, Ծաղկահովտի, Սևանի, Եղվարդի, Սպիտակի, Ստեփանավանի, Տաշիրի և Մարալիկի ներկայացուցչություններ), 15-ը՝ մինչև 50 շահառու (Արագածոտնի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզային մասնաճյուղեր, Արթիկի, Գորիսի, Բերդի, Թալինի, Արարատի, Մասիսի, Չարենցավանի, Թումանյանի, Սիսիանի, Դիլիջանի և Նոյեմբերյանի ներկայացուցչություններ), 7-ը՝ մինչև 100 շահառու (Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզային մասնաճյուղեր, Արմավիրի, Մարտունու և Աբովյանի ներկայացուցչություններ), 2-ը՝ մինչև 150 շահառու (Լոռու և Շիրակի մասնաճյուղեր) և 1-ը՝ 200-ից ավել շահառու (Երևանի քաղաքային մասնաճյուղ):

Անհամամասնություն գոյություն ունի նաև տարածքային ստորաբաժանումների աշխատողների ամսական ծանրաբեռնվածության ծավալներում: Մեկ աշխատողի կողմից ամսական 33 շահառուի ծառայության մատուցման չափորոշիչ պայմաններում Կոտայքի մարզային մասնաճյուղում յուրաքանչյուր աշխատող ամսական ապահովում է 14, Աբովյանի տարածքային ներկայացուցչությունում՝ 32, Եղվարդի տարածքային ներկայացուցչությունում՝ 13, Չարենցավանի տարածքային ներկայացուցչությունում՝ 28 շահառուի ծառայության մատուցում, իսկ Վայոց ձորի մարզային մասնաճյուղում և Վայքի ու Ջերմուկի տարածքային ներկայացուցչություններում այդ թիվը կազմում է 6-8:

4. Սպասվելիք իրավիճակը

Օպտիմալացման գործընթացն իրականացնելու համար անհրաժեշտ է՝

1) հստակեցնել տարածքային ստորաբաժանման իրական հզորությունները և ծավալները.

2) կրճատել տարածքային ստորաբաժանումների չծանրաբեռնված կարողությունները.

3) հարկ եղած դեպքում դադարեցնել այն ստորաբաժանումների գործունեությունը, որոնք գործում են սահմանված չափորոշիչներից շատ ցածր արդյունքով.

4) արդյունավետ օգտագործել հաստիքային միավորները:

5. Օպտիմալացման հիմնական խնդիրներն են

1) տարածքային ստորաբաժանումների նկատմամբ իրականացվող հսկողության բարձրացում.

2) ֆինանսական միջոցների ռացիոնալ օգտագործում.

3) մատուցվող ծառայությունները բնակչությանը հասանելի և մատչելի դարձնելը.

4) տարածքային ստորաբաժանումների անհրաժեշտ ժամանակակից տեխնիկական միջոցներով վերազինելը.

5) մատուցվող ծառայությունների էլեկտրոնային կարգով իրականացումը:

6. Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է

1) քանի որ տարածքային ստորաբաժանման գործունեության դադարեցումը նախատեսում է արխիվային փաստաթղթերի տեղափոխում և տեղաբաշխում, որը ծախսատար և որոշակի ժամանակ պահանջող գործընթաց է: Ծրագիրը պետք է իրականացնել 2 փուլով՝ 2013-2014 թթ. և 2015-2016թթ.

2) այդ փուլերում դադարեցվում է այն տարածքային ստորաբաժանումների գործունեության և գործառույթների իրականացումը, որոնք ամսական ծառայություն են մատուցում մինչև 25 շահառուի, և նրա գործառույթները փոխանցվում են աշխարհագրա-կան և տրանսպորտային առումով մոտակա տարածքային ստորաբաժանմանը՝ հաշվի առնելով գործառույթները ընդունող ստորաբաժանման պատրաստվածությունը.

3) իրենց գործունեությունը շարունակող տարածքային ստորաբաժանումների (25) տեխնիկապես վերազինում.

4) տեխնիկական վերազինումը կիրականացվի Հայաստանի Հանրապետության արխիվային գործի բարեփոխումների իրականացման, այդ թվում՝ արխիվային

ծառայությունների մատուցման էլեկտրոնային համակարգի ներդրման հայեցակարգի շրջանակներում.

5) ազատվող հաստիքային միավորները կօգտագործվեն իրենց գործունեությունը շարունակող ստորաբաժանումներում տեխնիկական միջոցներ սպասարկող աշխատողներ աշխատանքի ընդունելու համար:

7. Հիմք ընդունելով նշված հիմնադրույթները՝ ազգային արխիվի տարածքային ստորաբաժանումներում 2013-2020 թթ. կատարել հետևյալ վերակազմակերպումները.

քաղ. Երևան

Երևան քաղաքում արխիվային ծառայությունների մատուցման միասնական համակարգ ստեղծելու նպատակով դադարեցնել ազգային արխիվի Երևանի քաղաքային մասնաճյուղի գործունեությունը՝ մասնաճյուղի գործառույթները փոխանցելով ազգային արխիվին, որը հնարավորություն կտա ծառայությունների մատուցման բոլոր փուլերն իրականացնել մեկ «պատուհանից»:

Արագածոտնի մարզ

1-ին փուլում դադարեցնել Ծաղկահովտի ներկայացուցչության գործունեությունը՝ գործառույթները փոխանցելով Ապարանի ներկայացուցչությանը:

Արարատի մարզ

2-րդ փուլում դադարեցնել Արարատի և Մասիսի ներկայացուցչությունների գործունեությունը՝ գործառույթները փոխանցելով Արարատի մարզային մասնաճյուղին:

Արմավիրի մարզ

Պահպանվում է առկա կառուցվածքը:

Գեղարքունիքի մարզ

1) 1-ին փուլի սկզբին դադարեցնել Վարդենիսի ներկայացուցչության գործունեությունը՝ գործառույթները փոխանցելով Մարտունու ներկայացուցչությանը և Սևանի ներկայացուցչության գործունեությանը՝ գործառույթները փոխանցելով Գեղարքունիքի մարզային մասնաճյուղին.

2) 2-րդ փուլում դադարեցնել Ճամբարակի ներկայացուցչության գործունեությունը՝ գործառույթները փոխանցելով Գեղարքունիքի մարզային մասնաճյուղին:

Լոռու մարզ

1-ին փուլում դադարեցնել Սպիտակի և Տաշիրի ներկայացուցչության գործունեությունը՝ գործառույթները փոխանցելով Լոռու մարզային մասնաճյուղին և Ստեփանավանի ներկայացուցչությանը:

Կոտայքի մարզ

2-րդ փուլում դադարեցնել Եղվարդի ներկայացուցչության գործունեությունը՝ գործառույթները փոխանցելով Աբովյանի և Չարենցավանի ներկայացուցչություններին:

Շիրակի մարզ

1-ին փուլում դադարեցնել Աշոցքի ներկայացուցչության գործունեությունը՝ գործառույթները փոխանցելով Շիրակի մարզային մասնաճյուղին:

Սյունիքի մարզ

2-րդ փուլում դադարեցնել Մեղրու ներկայացուցչության գործունեությունը՝ գործառույթները փոխանցելով Սյունիքի մարզային մասնաճյուղին:

Վայոց ձորի մարզ

1-ին փուլում դադարեցնել Վայքի և Ջերմուկի ներկայացուցչությունների գործունեությունը՝ գործառույթները փոխանցելով Վայոց ձորի մարզային մասնաճյուղին:

Տավուշի մարզ

Պահպանվում է առկա կառուցվածքը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ